

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԹԱՌԱԹՈՒՄԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱՎԱՆԱՅՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<19>> սեպտեմբեր 2017թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի հունվարի 24-ի N 5 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Աղվան Հարությունյանի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Շահեն Վարդանյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յողիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Լյուսյա Պողոսյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլխաթյանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գոհար Խաչատրյանի, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Արամ Կոստանյանի, քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Սամվել Աղաջանյանի, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Հակոբ Սարգսյանի և իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի համայնքում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ուստիկանության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, հողօգտագործման, անասնաբուժության, առևտրի և ծառայությունների, քաղաքաշինության, արտակարգ իրավիճակների և տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության բնագավառներում:


1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արաձանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:


3. Նշումներ /իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Թառաթումբի համայնքի ղեկավարին:


**Աղվան Հարությունյան** (աշխատանքային խմբի ղեկավար)

  
/ստորագրություն/


**Շահեն Վարդանյան** (աշխատանքային խմբի անդամ) /

  
/ստորագրություն/


**Վանիկ Խուդավերդյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/

**Նարինե Մաղաքյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/


**Արամ Կոստանյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/


**Սամվել Աղաջանյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/


**Ցողիկ Բաբայան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/


**Լյուսյա Պողոսյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/


**Սմբատ Խլիսաթյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/


**Գոհար Խաչատրյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/

**Հակոբ Սարգսյան** (աշխատանքային խմբի անդամ)

  
/ստորագրություն/

**Վահանիկ Մարկոսյան** (Թառաթումբի համայնքի ղեկավար)

  
/ստորագրություն/

**2017 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի համայնքում  
իրականացված իրավական և մասնագիտական հսկողության ընթացքում  
հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք**

**Թառաթումբի համայնք**

**Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ**

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն:</p>			V պլանը չի մշակվել,	Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի ՀՀ-Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման 3-րդ կետի պահանջները, համաձայն որի համայնքի ղեկավարի կողմից պետք է մշակվեր ուժեղ երկրաշարժի դեպքում գործողություններ ի պլան	առաջարվում է մշակել պլանը սահմանված կարգով	մինչև 01.12.2017թ.
<p>2. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p>		V /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/ սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ		Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ համաձայն որի համայնքը պետք է ունենա սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ	Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով	Ֆինանսական հնարավորությունների առկայության ժամանակ

## Հավելված 2. Հողօգտագործման բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված հետևյալ փոփոխությունները՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) հողի սեփականության ձևի,</li> <li>2) հողի օգտագործման ձևի,</li> <li>3) հողի նպատակային նշանակության,</li> <li>4) հողատեսքերի և դրանց գործառնական նշանակության,</li> <li>5) հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման և քանդման,</li> <li>6) ռոոզելի, անջրդի, անօգտագործելի և չորացված հողերի վիճակի, պետական սեփականություն հանդիսացող հողերի շարժի և փոխակերպման (տրանսֆորմացիա),</li> <li>7) նոր անտառատնկումների և անտառահատումների,</li> <li>8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման և վարձակալության իրավունքով տրամադրման տվյալների:</li> </ol>			<p style="text-align: center;"><b>V</b></p> <p>Համայնքի յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողատեսքերի նպատակային նշանակությունը</p>	<p><b>Չի պահպանվել</b> ՀՀ կառավարության 17.09.2009 թվականի թիվ 1066-Ն որոշման 7-րդ կետի պահանջները, համաձայն որոի համայնքի ղեկավարը պետք է ներկայացնի հողաշինական փաթեթ՝ հողի նպատակային նշանակությունը փոխելու համար</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>

## Հավելված 3. Քաղաքաշինության բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն</p>			<p style="text-align: center;"><b>V</b></p> <p>Համայնքը չունի գլխավոր հատակագիծ</p>	<p><b>Չեն պահպանվել</b> ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, 42-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքը պետք ունենա գլխավոր հատակագիծ</p>	<p>Միջոցներ ձեռնարկել գլխավոր հատակագծի մշակման և հաստատման ուղղությամբ</p>	<p>Ֆինանսական և հնարավորությունների առկայության դեպքում</p>
<p>2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի առկայություն</p>			<p style="text-align: center;"><b>V</b></p> <p>Համայնքը չունի գլխավոր</p>	<p><b>Չեն պահպանվել</b> ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, 42-</p>	<p>Միջոցներ ձեռնարկել գլխավոր հատակագծի</p>	<p>Ֆինանսական և հնարավորություններ</p>

		հատակագիծ	րդ հողվածի, <<Քաղաքաշինության մասին>> << օրենքի, << կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքը պետք ունենա գլխավոր հատակագիծ	մշակաման և հաստատման ուղղությամբ	յունների առկայության դեպքում
3. գլխավոր հատակագիծը մշակվել է << օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված և հաստատված նախագծային առաջադրանքի հիման վրա		V Համայնքը չունի գլխավոր հատակագիծ	<b>Չեն պահպանվել</b> << ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, 42-րդ հոդվածի, <<Քաղաքաշինության մասին>> << օրենքի, << կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքը պետք ունենա գլխավոր հատակագիծ	Միջոցներ ձեռնարկել գլխավոր հատակագծի մշակաման և հաստատման ուղղությամբ	Ֆինանսակա և հնարավորությամբ յունների առկայության դեպքում
4. կառուցապատման նպատակով հողամասերը տրամադրվում են հաստատված ծրագրային փաստաթղթերով սահմանված նպատակային և գործառնական նշանակությանը և միջոցառումների առաջնահերթությանը համապատասխան		V Համայնքը չունի գլխավոր հատակագիծ	<b>Չեն պահպանվել</b> << ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, 42-րդ հոդվածի, <<Քաղաքաշինության մասին>> << օրենքի, << կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքը պետք ունենա գլխավոր հատակագիծ	Միջոցներ ձեռնարկել գլխավոր հատակագծի մշակաման և հաստատման ուղղությամբ	Ֆինանսակա և հնարավորությամբ յունների առկայության դեպքում
5. գլխավոր հատակագծի << օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխություններն արտացոլված են գործող գլխավոր հատակագծի համապատասխան գծագրերում և բացատրագրում		V Համայնքը չունի գլխավոր հատակագիծ	<b>Չեն պահպանվել</b> << ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, 42-րդ հոդվածի, <<Քաղաքաշինության մասին>> << օրենքի, << կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքը պետք ունենա գլխավոր հատակագիծ	Միջոցներ ձեռնարկել գլխավոր հատակագծի մշակաման և հաստատման ուղղությամբ	Ֆինանսակա և հնարավորությամբ յունների առկայության դեպքում
6. Համայնքի քաղաքաշինական մատյաններում հաշվառվում և մուտքագրվում են 1) համայնքի տարածքում ընդգրկված քաղաքաշինական գործունեության օբյեկտների՝ անշարժ գույքի միավորների, գործառնական տարածքների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների և բնակավայրերի քաղաքաշինական անձնագրերը. 2) համայնքի քաղաքաշինական անձնագիրը. 3) քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները. 4) կառուցապատողներին տրված ճարտարապետական հատակագծային առաջադրանքները		V Համայնքի քաղաքաշինական մատյաններում համայնքի տարածքում ընդգրկված քաղաքաշինական գործունեության օբյեկտների՝ անշարժ գույքի միավորների, գործառնական տարածքների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների և բնակավայրերի քաղաքաշինական	<b>Չեն պահպանվել</b> << ՏԻՄ օրենքի 42-րդ հոդվածի, <<Քաղաքաշինության մասին>> << օրենքի, << կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի N 802 որոշման պահանջները, համաձայն որոնց պետք է ունենան համայնքի տարածքում ընդգրկված քաղաքաշինական գործունեության օբյեկտների՝ անշարժ գույքի միավորների, գործառնական տարածքների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների և բնակավայրերի քաղաքաշինական	Առաջարկվում է օրենքով սահմանված կարգով ստեղծել և վարել քաղաքաշինական մատյաններ	<b>3-ամսյա ժամկետում</b>

5) շինարարության և քանդման թույլտվությունները		ան անձնագրեր չեն հաշվառվում և չեն մուտքագրվում՝ մատյանները բացակայում են	անձնագրեր և վարվեն մատյաններ		
7. համայնքի գոտևորման նախագծի կազմում կամ առանձին փաստաթղթի տեսքով մշակված է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը		V Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>Չի պահպանվել</u> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 30-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	2 ամիս
8. քաղաքաշինական կանոնադրության դրույթները չեն հակասում հաստատված ծրագրային փաստաթղթերի դրույթներին, ներդաշնակ են բնակավայրում պատմականորեն ձևավորված ճարտարապետական ոճին		V Համայնքը չունի գլխավոր հատակագիծ	Չեն պահպանվել ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, 42-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքը պետք ունենա գլխավոր հատակագիծ	Միջոցներ ձեռնարկել գլխավոր հատակագծի մշակման և հաստատման ուղղությամբ	Ֆինանսական և հնարավորությունների անկայության դեպքում
9. ճարտարապետահատակագծային և առաջադրանքը/ները (ՃՀԱ) տրամադրվում է/են համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի դրույթներին համապատասխան		V Համայնքը չունի գլխավոր հատակագիծ	Չեն պահպանվել ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, 42-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքը պետք ունենա գլխավոր հատակագիծ	Միջոցներ ձեռնարկել գլխավոր հատակագծի մշակման և հաստատման ուղղությամբ	Ֆինանսական և հնարավորությունների անկայության դեպքում
10. Ավարտված շինարարության շահագործումն էլեկտրոնային համակարգի միջոցով փաստագրելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողի գրանցում իրավասու մարմնի «էլեկտրոնային ընդունարանի» վեբ կայքում (ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման փուլում ստացված գրանցման համարով կամ, դրա բացակայության դեպքում՝ նոր գրանցման համարի տրամադրում)		V Ավարտված շինարարության էլեկտրոնային համակարգի միջոցով փաստագրում՝ գրանցում իրավասու մարմնի «էլեկտրոնային ընդունարանի» վեբ կայքում չի իրականացվում	Չեն պահպանվել՝ ՀՀ ՏԻՄ օրենքի, 42-րդ հոդվածի 7-րդ կետի (համայնքի ղեկավարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպում է ավարտված շինարարության շահագործման փաստագրումը), ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման պահանջները (Ավարտված շինարարության շահագործումը էլեկտրոնային համակարգի միջոցով փաստագրելու համար կառուցապատողը գրանցվում է իրավասու մարմնի «էլեկտրոնային ընդունարան» վեբ կայքում՝ ճարտարապետահատակ	Աշխատանքներ տանել էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ	3- ամիս ժամկետ

				ագծային առաջադրանքի տրամադրման փուլում ստացված գրանցման համարով կամ, դրա բացակայության դեպքում, ստանում նոր գրանցման համար՝ նշելով իր էլեկտրոնային հասցեն ու հեռախոսահամարը և իրավասու մարմին է ներկայացնում էլեկտրոնային ձևաթղթով (լացված դիմում)		
11. Էլեկտրոնային համակարգի կիրառման դեպքում՝ կառուցապատողի դիմումին կցվող անհրաժեշտ փաստաթղթերի տեսաներածված օրինակների առկայություն՝ 1) ընդունող հանձնաժողովի շահագործման ակտը կամ երկկողմանի ակտը: 2) երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները: 3) կադարողական փաստաթղթերի ցանկը: 4) Շահագործման ակտի ձևակերպման համար «Տեղական տրոփերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը)			Վ կառուցապատողի դիմումին կցվող անհրաժեշտ փաստաթղթերի տեսաներածված օրինակներ առկա չեն	Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N626-Ն որոշման պահանջները, համաձայն որի պետք է ապահովել կառուցապատողի դիմումին կցվող անհրաժեշտ փաստաթղթերի տեսաներածված օրինակների առկայությունը	Առաջարկվում է ապահովել կառուցապատողի դիմումին կցվող անհրաժեշտ փաստաթղթերի տեսաներածված օրինակների առկայությունը	6- ամիս ժամկետ
12. Էլեկտրոնային համակարգի կիրառմամբ դիմումը մերժելու դեպքում՝ իրավասու մարմնի կողմից դիմողին տեղեկացում՝ այն էլեկտրոնային հասցեով և (կամ) հեռախոսահամարով, որը նշված է դիմումում, նշելով մերժման պատճառները			Վ Էլեկտրոնային համակարգով դիմումներ չեն ընդունվում	Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N626-Ն որոշման պահանջները, համաձայն որի պետք է էլեկտրոնային համակարգ ներդրվեր	Աշխատանքներ տանել էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ	6- ամիս ժամկետ
13. Էլեկտրոնային համակարգի կիրառման դեպքում՝ կառուցապատողի կրկնակի դիմումի ներկայացում իրավասու մարմնի վեբ կայքում ստացված գրանցման համարով			Վ Էլեկտրոնային համակարգով դիմումներ չեն ընդունվում	Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N626-Ն որոշման պահանջները, համաձայն որի պետք է էլեկտրոնային համակարգ ներդրվեր	Աշխատանքներ տանել էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ	6- ամիս ժամկետ
14. Էլեկտրոնային համակարգի կիրառման դեպքում իրավասու մարմնի կողմից դիմողին տեղեկացում՝ կառուցապատողի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիությունն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին			Վ Էլեկտրոնային համակարգ ներդրված չէ	Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N626-Ն որոշման պահանջները, համաձայն որի պետք է էլեկտրոնային համակարգ ներդրվեր	Աշխատանքներ տանել էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ	6- ամիս ժամկետ
15. Էլեկտրոնային համակարգի կիրառման դեպքում՝ իրավասու մարմնի կողմից կառուցապատողի կողմից ներկայացված փաստաթղթերի պատշաճ լինելու հանգամանքը հավաստելուց հետո շահագործման ակտի (N 1 ձև) ելքագրում և դրա կնիքով հաստատված թղթային տարբերակների տրամադրում			Վ Էլեկտրոնային համակարգ ներդրված չէ	Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N626-Ն որոշման պահանջները, համաձայն որի պետք է էլեկտրոնային համակարգ ներդրվեր	Աշխատանքներ տանել էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ	6- ամիս ժամկետ

կառուցապատողին և համապատասխան մարմիններին						
16.Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N1, կետ 9)		Վ Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և, սակայն վկայականներ չեն տրամադրվում		Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման 1-ին հավելվածի 9-րդ կետի պահանջները, համաձայն որի պետք է տրամադրվեն գերեզմանների վկայականներ	Տրամադրել գերեզմանի վկայական	3 ամիս ժամկետ
17.Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակումը և հաստատումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N4, կետ 10)			Վ Հատակագծերը բացակայում է	Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման 4-րդ հավելվածի 10-րդ կետի պահանջները, համաձայն որի պետք է տրամադրվեն գերեզմանների վկայականներ	Մշակել գերեզմանատների օգտագործման հատակագծեր	3 ամիս ժամկետ
18.Գերեզմանատների մուտքի մուտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N4, կետ 15,16)			Վ Գերեզմանատների մուտքի մուտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոններ չեն տեղադրվել	Չեն պահպանվել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման 4-րդ հավելվածի 15-րդ և 16-րդ կետերի պահանջները, համաձայն որի պետք է տեղադրվեն գերեզմանատնից օգտվելու կանոններ	Գերեզմանատներում մուտքի մուտ օգտվելու կանոնների տեղադրում	3 ամիս ժամկետ

### Հավելված 4. Պարտադիր լիազորությունների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:			Վ Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը	Դրույթի պահանջները պահպանված չեն, Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 30-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	1 ամիս
2. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը օրենքով			Վ Համայնքի ավագանին	Դրույթի պահանջները պահպանված չեն, Չի պահպանվել	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները	1 ամիս



<p>սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>		<p>հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը</p>	<p>&lt;&lt;Տեղական ինքնակառավարման մասին&gt;&gt; ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին օրենքով սահմանված կարգով պետք է որոշում ընդունի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու վերաբերյալ</p>	<p>պահպանելու ուղղությամբ</p>	
<p>3. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն:</p>		<p>✓ Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չի պահպանվել</u> &lt;&lt;Տեղական ինքնակառավարման մասին&gt;&gt; ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է ընդունում աշխատակազմի գործավարության կարգի վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>